Իսկ Ակակիոս չարանենդ եպիսկոպոս Կեսարու Պաղեստինոյ՝ մախացեալ ընդ համբաւ սրբութեան և խնամութեան երանելւոյն Կիւրղի, յարոյց հալածանս ընդդէմ նորա, և 'ի բացակայութեան նորին ժողովով Արիանոսաց ընկեց զնա յաթոռոյն, և այնչափ բռնացաւ՝ մինչեւ հալածել զԿիւրեղ քաղաքէ 'ի քաղաք և ինքնին տիրել աթոռոյ նորա, մինչեւ դիցէ զայլ ոք արքունի իշխանութեամբ։ Իսկ երանելին Կիւրեղ խոյս տուեալ յԵրուսաղէմէ գնաց 'ի Տարսոն Կիլիկեցւոց առ Սիղուանոս եպիսկոպոս, և նա սիրով ընկալաւ զնա, և թոյլ ետ քարոզել զԲանն կենաց առ ժողովուրդն Տարսոնի։ Գումարեցաւ ժողով 'ի Սելեւկիա 160 Եպիսկոպոսաց, որք էին Արիանոսք և Կէս Արիանոսք. ուր եհաս և Ակակ գործակցովք իւրովք, և իբրև արդարացաւ Կիւրեղ 'ի ժողովի անդ, զայրացեալ Ակակայ դիմեաց 'ի Կոստանդինուպոլիս և չարախօս եղեւ զհարց ժողովոյն առ կայսրն Կոստանդիոս, այլ առաւել ընդդէմ Կիւրղի գրգռեաց զնա չարանենդ լեզուն. քանզի ասէր թէ զսուրբ պատմուճանն ոսկեթել, զոր հայր քո 'ի պատուել զեկեղեցին Երուսաղէմի տուեալ էր 'ի պարգեւս Մակարայ հայրապետին, նովաւ կատարել զմկրտութեանն խորհուրդ, զայն վաճառեաց Կիւրեղ պատճառանօք. վարձակի կամ միմոսի ումեմն արկեալ զանձամբ այնպէս եմուտ 'ի թատրոն, այլ 'ի ժամ կաքաւելոյն պատուհասեալ անկեալէ և մեռեալ, յաւել և զայլ չարախօսութիւնս։

Ի գումարել ժողովոյ ըստ կամացն Ակակեանց հրամանաւ Կայսեր (360) 'ի թագաւորեալ քաղաքի անդ, յորում հաստատեցաւ Հանգանակն Արիմինեայ, դատապարտեցան ամենայն հանգանակք որ յառաջ քան զնա յօրինեալ էին և որ յետ այնորիկ երբէք յօրինեսցին. ընկեցան յաթոռոյ գլխաւորք Կէս Արիանոսացն. հերքեցին զԿիւրեղ և զմիաբանեալսն ընդ նմա իբրեւ խռովիչս և մոլորեցուցիչս. և եկ հրաման արտաքսմանութեան նոցա։ Ակակիոս չոքաւ 'ի Տարսոն և ետ աքսորել զՍիղուանոս և զԿիւրեղ 'ի հեռաւոր տեղիս։ Կարգեաց յԵրուսաղէմ առ ժամանակ մի փոխանակ Կիւրղի զԵւտիքիոս ոմն եպիսկոպոս թշնամի նորա, որպէս և յետ սակաւուց զայլ ոք. դարձեալ ասի յոմանց թէ 'ի սոյն մի-